ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2024 թվականի թիվ 173 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2024ԹՎԱԿԱՆԻ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշման «Բուսաբուծության աջակցության ծրագրի» հավելվածի 21 և 22-րդ կետերը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել աշխատանքային խումբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համայնքներում 2024 թվականի «Բուսաբուծության աջակցության ծրագրի» շրջանակներում գարնանացան մշակաբույսերի ցանքատարածություններում ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու նպատակով/ համաձայն հավելվածի /:

2. Աշխատանքային խմբին՝ մոնիթորինգն իրականացնել մարզի շահառուների թվի առնվազն 20 %-ի ընդգրկելիությամբ: Մոնիթորինգից հետո մեկ ամսվա ընթացքում ամփոփել արդյունքները և ծրագրի 20-րդ կետով նախատեսված ձևաչափով ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-06-26 12:17:44 GMT+4
Հաստատված է EKENG-ի կողմից

mID

«Հավելված»
ՀՀ Տավուշի մարզպետի
2024թ. հունիսի 25-ի թիվ 173 - Ա որոշման

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2024Թ. ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Խմբի ղեկավար՝
Վաղարշակ Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
անդամներ՝
Արկադի Ամիրխանյան –ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Գրիգոր Փայտյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Զարմայիլ Մարդանյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարության <<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի մոնիթորինգի և տեղազննության իրականացման բաժնի գլխավոր մասնագետ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա.ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

26.06.2024

X

ԱՍՔԱՆԱԶ ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

Подписано: BABLUMYAN ASKANAZ 3602670198